



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐՔԱԶԱՆ ՀՅՐ ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆՂԵԱՆ ՊԱՏԳԱՍԸ

Ս. ԾՆՈՒՆԴԸ ` ՀՐԱՇՔԸ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան հրաշալի դէպքէն աւելի քան երկու հազար տարիներ ետք, դարձեալ բարեմաղթութիւններ ու շնորհաւորութիւններ կը փոխանակենք եւ հաւաքաբար կը տօնենք «մեծ եւ սքանչելի խորհուրդը», որ յայտնուեցաւ ու յայտարարուեցաւ աշխարհին՝ հրեշտակներուն փառաբանութեան երգերով: Դարեր ետք, հրեշտակներուն աւետիսը նոյն քաղցրութեամբ կը հնչէ մեր կեանքին մէջ, եւ կը ջերմացնէ մեր սրտերն ու հոգիները:

Ս. Ծնունդը մեծագոյն հրաշքն է աշխարհին, իրաւամբ՝ հրաշքներուն հրաշքը, անսահմանաց ու անկրկնելի: Ինչ որ պատահեցաւ լուռ ու սուրբ գիշերուան մէջ, Աստուծոյ փառքին հրաշալի երեւումն էր երկրի վրայ, Աստուծոյ մարդեղութիւնը՝ Քրիստոսի մէջ: *«Եւ Բանը մարդ եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, եւ մենք տեսանք անոր փառքը. փառքը միածինին, որ Հօրմէն եկաւ՝ շնորհքով ու ճշմարտութեամբ լեցուն»* (Յովհ. 1:14) Աստուած Ինք երկինքէն երկիր իջաւ, մարդացաւ ու զգեցաւ մարդկային բնութիւն. ան բաժնեկից եղաւ մարդուն ուրախութեանց ու դառնութիւններուն, բնակեցաւ մեր սրտերուն մէջ, մեզի ընծայեց յաւիտենական կեանքի խոստումը: Ուրեմն, սիրելիներ, թող մեր հոգիները ցնծութեամբ լեցունին Ս. Ծննդեան ոգիով՝ որ է Խաղաղութիւնը, Ս. Ծննդեան հրաշքով՝ որ է Յոյսը, եւ Ս. Ծննդեան սրտով՝ որ է Սէրը:

Ս. Ծնունդն ու Աստուածայայտնութիւնը տեղի ունեցան բազմախորհուրդ հրաշքներով, որոնք սկիզբ առին Ս. Կոյսին անապական յղութեամբ ու Գաբրիէլ Հրեշտակապետին կողմէ անոր տրուած աւետիս-պատգամով. *«Մի՛ վախճար, Մարիամ, որովհետեւ Աստուծոյ շնորհքին արժանացար: Ահա պիտի յղանաս ու զաւակ մը պիտի ծնիս, որ Յիսուս պիտի կոչես: Անկա մեծ պիտի ըլլայ ու Բարձրեալին Որդին պիտի կոչուի»* (Դուկաս 1:30-32):

Այլ հրաշալիք մըն էր Եսայի մարգարէին կողմէ կատարուած մարգարեութիւնը՝ Յիսուսի ծնունդէն ետքը հարիւր տարիներ առաջ: Այս բոլորը եղան, որպէսզի Մարգարէին միջոցով մարդկութեան փոխանցուած Աստուծոյ խոստումը իր կատարումին հասներ. *«Ահա կոյսը պիտի յղանայ եւ*

որդի մը ծնի, եւ գայն պիտի կոչեն Էմմանուէլ, որ կը նշանակէ՝ Աստուած մեզի հետ» (Ես. 7:14, Մատթ. 1:23):

Աքանչելի ծնունդէն ետք, հրեշտակը երեւցաւ հովիւներուն ու տուաւ հրաշալի ակտիսը. «Մի՛ վախնաք. ձեզի ակտիսս մը պիտի տամ, որ ամբողջ ժողովուրդին մեծ ուրախութիւն պիտի պատճառէ: Այսօր, Ղաւիթի քաղաքին մէջ ձեր Փրկիչը ծնաւ, որ Օծեալ Տէրն է» (Ղուկաս 2:10-11): Հրեշտակները երգեցին. «Բարձունքներուն մէջ Աստուծոյ փառք, խաղաղութիւն երկրի վրայ, եւ մարդոց միջեւ հաճութիւն» (Ղուկաս 2:14):

Տնծալի դէպքը ներշնչում տուաւ իմաստուն մոգերուն, որոնք ճամբայ ելան դէպի Բեթլեհէմ, իրենց հետ տանելով թանկարժէք նուէրներ՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս, փառաբանելու համար «թագաւորներու Թագաւորը». անոնք Զրիստոսի ծննդավայր մտուրը հասան ուրիշ հրաշքով մը՝ Բեթլեհէմի լուսաւոր Աստղին առաջնորդութեամբ:

Զրիստոսի Ս. Ծնունդը արտասովոր դէպք էր ու հրաշալիք, որ կը տօնախմբուի հազարաւոր տարիներէ ի վեր: Ահաւասիկ այսօր անգամ մը եւս կը միանանք այդ տօնախմբութեան: Աստուած մարդկութիւնը փրկելու համար ծրագիր մը ունէր. ան իր խոստումը կատարեց, որպէսզի մենք փրկուինք ու յաւիտենական կեանք ունենանք, պայմանաւ որ զինք ընդունինք մեր կեանքերուն, սրտերուն ու հոգիներուն մէջ: Տարուէ տարի, ժամանակի արգելքները չճանչցող այս պատգամը կը շարունակէ ներշնչել ու առաջնորդել մեզ, տալով մեզի մեր Փրկչին փայլուն աստղին հետեւելու հաւատքը:

Նուէրներու փոխանակման այս օրերուն, յիշենք, որ Զրիստոսի Ս. Ծնունդը նուէրներուն մեծագոյնն է ու նոր սկիզբ մը, որ Աստուած պարգեւեց մարդկութեան: Մարդուն հանդէպ իր սերը Աստուած կենսագործեց՝ աշխարհ ղրկելով իր Միածին Որդին, որպէսզի փրկէ մեզ՝ մեղաւորներս, ու զինք մեր հոգիներուն մէջ ընդունողներս բարեփոխէ համաձայն իր Սուրբ Կամքին: Աստուծոյ կողմէ մեզի տրուած այս պարգեւը, խորքին մէջ մարդուն համար հոգեկան վերածննդեան ու նոր սկիզբի մը ազդանշանն է: Ան պարգեւ մըն է իւրաքանչիւր անհատի, նուէր մը, որ չի թառամիր ու չի կորսուիր: Փրկութեան, յաւիտենական կեանքի եւ սիրոյ պարգեւը, որ Աստուած շնորհեց մեզի, պարգեւ մըն է, որ միշտ կը վերանորոգուի ամեն անգամ որ Տէր Յիսուսը ընդունինք մեր սրտերուն մէջ:

Սիրելիներ,

Այս մտածումներով կ'աղօթենք, որ Նոր Տարուան սեմին, հրաշափառ Ս. Ծննդեան ու Աստուածայայտնութեան տօնի հրաշքը մեր կեանքերը պայծառացնէ ու հարստացնէ: Ընորհակալ ըլլանք Տիրոջ, իր սիրոյն համար, Ս. Ծննդեան հրաշքին մասնակից ըլլանք, եւ մեր ուշադրութիւնը սեւեռենք Աստուծոյ փառքին, որ այս Տօնին իսկական իմաստն ու նշանակութիւնն է:

Արդ, նոր Տարուան ու Ս. Ծննդեան հրաշափառ տօնին առիթով, որդիական սիրով կը շնորհաւորենք Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսը, մաղթելով քաջառողջութիւն եւ արգասաբեր տարիներ:

Հայրենի պետութեան ղեկավարներուն կը մաղթենք արեւշատութիւն, իմաստութիւն եւ ժողովրդանուէր ծառայութիւն: Մեր սրտագին բարեմաղթութիւնները՝ նաեւ Թեմիս հոգեւորական դասուն, Ազգային Իշխանութեան, Երեսփոխանական ժողովին, մեր եկեղեցիներու հոգաբարձական կազմերուն, սերունդ կերտող կրթական մշակներուն, կազմակերպութեանց, հաստատութեանց եւ մարմիններուն, բարերարներուն ու մեր հաւատացեալ ժողովուրդին: Մանկացեալ Փրկչէն աղօթքով կը խնդրենք, որ աշխարհիս պարգեւէ սեր ու խաղաղութիւն, բարի գործերու յաջողութիւն:

Ս. Ծննդեան ու տարեմուտի այս օրերուն եւ ընդմիջտ, հաւատքի, յոյսի, սիրոյ, խաղաղութեան ու հաճութեան ալիքները թող ողողեն Հայաստանը, Արցախն ու Հայկական Սփիւռքը, թող պայծառացնեն մեր ժողովուրդին կեանքը:

Թող Բեթլեհեմի փայլուն աստղը ըլլայ առաջնորդ՝ մեր հոգեւոր ճանապարհորդութեան, ինչպէս որ եղաւ իմաստուն մոգերուն առաջնորդը՝ աւելի քան երկու հազար տարիներ առաջ:

Թող Երկնաւոր Հօր սերը մեր սրտերն ու հոգիները ջերմացնէ խաղաղութեամբ, ցնծութեամբ, այսօր ու մեր կեանքի բոլոր օրերուն:

**Շնորհաւոր նոր տարի,
Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Ձեզի եւ մեզի մեծ աւետիս:**

Աղօթարար՝

Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Առաջնորդ
Ա. Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի

Ս. Ծնունդ, 2008

Prelate's New Year and Christmas Message

CHRISTMAS: THE MIRACLE OF OUR LIVES

Over two millennia since the miraculous and Glorious Birth and Theophany of our Lord Jesus Christ, once again we exchange good wishes and collectively celebrate the “Great and Marvelous Mystery” that was revealed and declared to the world with the angels’ song of praise. Centuries later, the

tidings of the angels continues to resonate in our lives and brings warmth to our hearts and souls.

The Birth and Theophany of our Lord is the greatest of miracles, unlike any the world had ever known or has known since. What transpired on that silent and holy night was indeed the miraculous appearance of the Glory of God on earth; the incarnation of our Lord in Christ. *“And the Word became flesh and dwelt among us, and we beheld His glory, the glory as of the only begotten of the Father, full of grace and truth”* (John 1:14). God Himself came down from heaven and took on the nature of man; He took on the joys as well as sorrows of mankind, dwelt in our hearts, and gave us the promise of eternal life. Therefore, let us rejoice in the spirit of Christmas which is peace, the miracle of Christmas which is hope, and the heart of Christmas which is love.

In actuality, many miracles surrounded the Nativity and Theophany of our Lord, beginning with the virgin conception of Mary and the annunciation by the archangel Gabriel who annunciated to Mary, *“Do not be afraid, Mary, for you have found favor with God. And behold, you will conceive in your womb and bring forth a Son, and shall call His name JESUS. He will be great, and will be called the Son of the Highest”* (Luke 1:30-32).

Also miraculous is the prophecy by the Prophet Isaiah foretelling of the Birth of Jesus seven hundred years prior. So all this was done that it might be fulfilled which was spoken by the Lord through the prophet, saying: *“Behold, the virgin shall be with child, and bear a Son, and they shall call His name Immanuel,” which is translated, “God with us.”* (Isaiah 7:14, Matthew 1:22-23).

Following the Glorious Birth, it was the angels who marvelously appeared to the shepherds to announce the good tidings, *“Do not be afraid, for behold, I bring you good tidings of great joy which will be to all people. For there is born to you this day in the city of David a Savior, who is Christ the Lord”* (Luke 2:10-11), and proclaim, *“Glory to God in the highest, and on earth peace, goodwill toward men!”* (Luke 2:14). This occurrence inspired the three wise men to set out for Bethlehem bearing gifts of gold, frankincense, and myrrh, to glorify and praise the “King of Kings”, and they reached the manger by another miracle which was the Star of Bethlehem that guided them to Jesus.

The extraordinary events leading up to and including the Birth of our Savior is the miracle that has been celebrated for thousands of years and that we continue to celebrate today. God had a plan of salvation for mankind and He fulfilled that promise so that we may have eternal life if we believe and welcome Him into our lives. Jesus was born not only into the world, but in our hearts and spirits as well. Year after year, this timeless message continues to inspire us and gives us faith to follow the bright and shining star that is our Savior.

In this season of gift-giving let us remember that the Birth of our Lord Jesus Christ is the greatest gift and new beginning God offered to mankind. God demonstrated His love for mankind by sending His only begotten Son to deliver us from sin and to transform those who embrace Him. The gift that God gave us on that blessed day is a new spiritual beginning for mankind as a whole as well as for individuals, and it is a gift that never fades. The gift of salvation, eternal life, and love that God granted us is one that is renewed each time we accept Jesus in our hearts.

Dear Faithful,

With these thoughts and feeling, I pray that our lives be transformed in the New Year by the wonder of the miraculous Birth and Theophany of our Lord. Let us thank the Lord for His love, share the wonder of our Savior's Birth, and behold the Glory of God which is the true meaning and significance of the season.

On this blessed Feast we extend our filial love to our Pontiff His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia, wishing many more years of health and prosperity in the spiritual guidance of the Armenian people. We pray for wisdom and success to the leaders of our homeland in their civil service of our brethren. We convey our warm wishes of love and peace to the members of the Religious and Executive Councils, Representatives Assembly Delegates, Boards of Trustees, educators, sister organizations, sponsors, and faithful parishioners.

May the tidings of love, hope, peace, and goodwill radiate throughout Armenia, Artsakh, and the Diaspora and illuminate the lives of the Armenian people.

May the bright star of Bethlehem guide us on our spiritual journey just as it guided the Wise Men over two thousand years ago.

May His love fill your hearts with peace and joy during this time and always.

***Happy New Year
Christ is Born and Revealed.***

Prayerfully,

Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Western United States

New Year and Theophany, 2008